ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

Հանճին Գուրգեն Մահարու (1903-1969) այլ ժամանակներում մեր գրականությունը մի ականավոր սիրերգակ էր ունենալու: Եվ թեկուզ այս ժողովրդի ու իր հազարամյա գրականության համար դժվար է փնտրել ու մանավանդ գտնել այլ ժամանակներ, քանի որ Խորենացու դարերից սկսյալ առ այսօր այս ժողովուրդը ապրել է միայն մի՝ գոյության կռվի ժամանակներում, բայց Մահարին կարողանում էր, որպես թե այդ հենց այդպես էլ պետք է լիներ, որպես թե կյանքը միայն այդ է որ կա, իր ժողովրդի ու իր կյանքից շատ ու շատ բաներ անտեսելով հրապարակ բացել էր ներսի ոսկեգանգուր պոետի համար: Դրան՝ մեր բոլորիս ներսի այդ Մոցարտին ոսկեգանգուր պոետ անվանենք կամ մերկ սրինգը ձեռքին սրնգահար կամ անառակ որդի կամ գտնենք մի այլ անուն այդ պատանու համար, որ տան հոգսերից իրեն հեռու է պահում որպես մատաղ արջառը լծից՝ սարսափահար խույս է տալիս հորենական տան թշվառությունից և երբեմն, որպես վկայություն իր երկնային կոչման և կարծես ի հեճուկս հորենական տան անմխիթար վիճակի, սրնգի մաքուր անքեն, անհոգ մեղեդի է ելևէջում հորենական տան անմխիթար վիճակի վրա և կարծես ի հեճուկս այդ վիճակի: Մահարին այդպիսին էր, Մահարին այդպիսին էր միշտ և ամենուր, այնքան, որ նրա հասակակիցներից մեկը, որ այդ իրավունքը ուներ, նրան թեթև կշտամբանքի նման մի ծանր դիտողություն արեց. «Ընտրածդ նյութին համեմատ ոճդ շա՞տ չի երջանիկ»: Իսկ «ընտրած նյութը» իր ու իր հայրենիքի ծանր կյանքն էր՝ մեր ցեղասպանությունը: Նրան, այո, ծանր կյանք էր պարտադրվել, այս երկնքի տակ ապրված թերևս ամենածանր կյանքը. գենոցիդ՝ բոլորի և յուրաքանչյուրի սպանություն, որի կոնտեքստում մազապուրծ գաղթն ու հայրենիքի հավիտենական կորուստը բախտավորություն էին, այդ երեսուներեքամյա բանաստեղծի տասնյոթ տարվա անհուշ բանտ ու աքսոր, և այս դեպքում արդեն բախտավորությունը աքսորն էր, որի մասին կարողանում էր նույնիսկ ժպիտով պատմել, այս մի 10-15 տարվա արագ ու ջղային աշխատանք երկու թշնամու արանքում, որոնցից մեկը անդրշիրիմյան բռնակալի մոտենալով ահագնացող ոտնաձայնն էր և մյուսը՝ բկի թունավոր խպիպը: Նա պարտավոր էր իր դաժան ժամանակի տարեգիրը լինել և եղավ: Իր խառնվածքի մարդու համար դա իսկական հերոսություն էր: Եղեռնի և դիկտատուրայի մարդակերների ժամանակը հայ գրականության մեջ խորապես իր գրչով է նշված, գրչով մի մարդու, որ այլ ժամա-

նակների և այլ կյանքի համար էր ծնվել.- «Մանկություն, Պատանեկություն և Երիտասարդության սեմին», «Այրվող այգեստաններ», «Չարենց», «Ծաղկած փշալարեր» և վիպակների-պատմվածքների մի շարք, որ մենք «սիբիրյան» ենք կնքում: